

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### **Եվրասիական տնտեսական միության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասին**

Եվրասիական տնտեսական միության անդամներ հանդիսացող Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ) և Եվրասիական տնտեսական միությունը՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը (ՉԺՀ)՝ մյուս կողմից, այսուհետ՝ Կողմեր՝

գիտակցելով առևտրին աջակցմանն ու առևտրի ընթացակարգերի պարզեցմանը, անվտանգության ապահովմանն ուղղված համատեղ միջոցառումների անցկացման, Եվրասիական տնտեսական միության և ՉԺՀ տնտեսական շահերի պաշտպանության, մաքսային տեղեկատվության փոխանակման ոլորտում համագործակցության ամրապնդման անհրաժեշտությունը,

ձգտելով Եվրասիական տնտեսական միության և ՉԺՀ մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների ու միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության կանոնավոր փոխանակման միջոցով կանխարգելել, հայտնաբերել ու կանխել Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերի և ակտերի, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրության և ՉԺՀ օրենսդրության խախտումները,

մտադրություն ունենալով պարզեցնելու մաքսային ընթացակարգերը, նպաստելու մաքսային գործառնությունների կատարմանն ու տեղափոխվող ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության անցկացման արագացմանը,

սատարելով Եվրասիական տնտեսական միության և «Մեկ գոտի, մեկ ուղի»

նախաձեռնության փոխադարձ կապակցման, ՉԺՀ, Եվրասիական տնտեսական միության և Եվրոպայի միջև միջազգային լոգիստիկ ուղիների ստեղծման ջանքերը, ղեկավարվելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով և նորմերով, համաձայնեցին հետևյալի մասին.

## Հոդված 1 Սահմանումները

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը.

«Կողմերի օրենսդրություն»՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և ՉԺՀ միջազգային պայմանագրեր, օրենսդրական և նորմատիվ իրավական ակտեր, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրեր ու ակտեր,

«տեղեկատվություն»՝ ապրանքների ու միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկություններ, որոնք փոխանցվում են էլեկտրոնային եղանակով՝ սույն Համաձայնագրին համապատասխան,

նշանակման երկիր՝ ապրանքների ներմուծման մաքսային փաստաթղթերի ձևակերպման երկիր (տարածաշրջան),

ուղարկող երկիր՝ ապրանքների արտահանման մաքսային փաստաթղթերի ձևակերպման երկիր (տարածաշրջան),

տարանցման երկիր՝ ապրանքների տարանցիկ փոխադրման մաքսային փաստաթղթերի ձևակերպման երկիր (տարածաշրջան),

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքները, ինչպես նաև դրանց սահմաններից դուրս գտնվող այն արհեստական կղզիները, կառույցները, կայանքները և այլ օբյեկտները, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններն ունեն բացառիկ իրավազորություն,

ՉԺՀ մաքսային տարածք՝ տարածք, որտեղ կիրառվում է ՉԺՀ մաքսային օրենսդրությունը,

ապրանք՝ ցանկացած ապրանք, որը սահմանվում է Կողմերի մաքսային օրենսդրության համապատասխան և տեղափոխվում է Եվրասիական տնտեսական միության և ՉԺՀ մաքսային սահմաններով,

միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ՝ Եվրասիական տնտեսական միության և ՉԺՀ մաքսային սահմաններով ապրանքների տեղափոխում իրականացնող նավերի, վերգետնյա տրանսպորտային միջոցների, այդ թվում՝ երկաթուղային տրանսպորտային միջոցների, օդանավերի տարբեր տեսակներ:

## Հոդված 2

### Համաձայնագրի նպատակը

Սույն Համաձայնագրի նպատակը Եվրասիական տնտեսական միության և ՉԺՀ մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների ու միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակմանն ուղղված համագործակցության կազմակերպումն է, որը հնարավորություն է տալիս ապահովելու՝

Եվրասիական տնտեսական միության և ՉԺՀ մաքսային տարածքներ ներմուծվող ապրանքների, ինչպես նաև տարանցիկ կարգով տեղափոխվող ապրանքների մասով մաքսային գործառնությունների կատարման արագացումը.

տեղեկատվության փոխանակման ժամանակ ստացված՝ ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալների օգտագործումը ռիսկերի կառավարման ոլորտում արդյունավետության բարձրացման և մաքսային հսկողության ձևերի կատարելագործման համար.

Եվրասիական տնտեսական միության և ՉԺՀ մաքսային տարածքներ մաքսային հսկողությունից խուսափելու ճանապարհով պոտենցիալ վտանգավոր, արգելված և տեղափոխման համար սահմանափակված ապրանքների ներմուծման հետ կապված ռիսկերի և Կողմերի շահերին առնչվող անվտանգության

ապահովման ոլորտում այլ ռիսկերի նվազեցումը:

### Հոդված 3

#### Համաձայնագրի առարկան

1. Սույն Համաձայնագրի իրականացման շրջանակներում Կողմերն իրականացնում են ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, ջրային (ծովային և գետային) տրանսպորտի տեսակներով Եվրասիական տնտեսական միության և ՉԺՀ մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում:

2. Տեղեկատվության փոխանակումն իրականացվում է փուլ առ փուլ՝ Կողմերի կողմից այն առանձին արձանագրություններին համապատասխան տեխնիկական պատրաստվածության մակարդակին հասնելուն զուգընթաց, որոնք կնքվում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ իրենց պետությունների օրենսդրության հիման վրա պետական քաղաքականության, մաքսային գործի ոլորտում նորմատիվ ակտերի իրականացման գործառույթներ, ինչպես նաև մաքսային գործի ոլորտում հսկողության և վերահսկողության գործառույթներ իրականացնող կենտրոնական մաքսային մարմինների և ՉԺՀ գլխավոր մաքսային վարչության միջև՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի դրույթները: Նշված արձանագրություններից առաջինը պետք է ստորագրվի սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 18 ամիսը լրանալուց ոչ ուշ:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված արձանագրություններով պետք է սահմանվեն այն ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկությունների ծավալն ու կազմը, որոնց մասով իրականացվելու է տեղեկատվության փոխանակումը՝ հաշվի առնելով սույն հոդվածի 5-7-րդ կետերը, սույն Համաձայնագրի 1-ին հավելվածը և Կողմերի կողմից սահմանված չափանիշները, այդ թվում՝ ապրանքների տեղափոխման ուղղությունները և դրանց փոխադրման եղանակները, ապրանքների ծածկագրերը,

անցակետերը, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման տեխնիկական պայմանները (տեղեկությունների կառուցվածքը և ձևաչափը, օգտագործվող դասակարգիչներն ու տեղեկագրքերը, փոխանակման կարգը և կանոնակարգը, փոխանակման եղանակները, տեղեկատվական փոխգործակցության կազմակերպման սխեման, տեղեկատվության փոխանակման ժամանակ անվտանգության ապահովմանը ներկայացվող պահանջները):

Փոխանցվող տեղեկությունների կառուցվածքն ու ձևաչափը սահմանվում են՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտները, ինչպես նաև Համաշխարհային մաքսային կազմակերպության և Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի առաջարկությունները տվյալների փոխանակման բնագավառում:

4. Կողմերը ձգտելու են ընդլայնել փոխանակման ենթակա տեղեկությունների ծավալն ու կազմը՝ հաշվի առնելով սույն հոդվածի 5-7-րդ կետերը և սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածը:

5. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները ՉԺՀ-ին տեղեկատվություն են տրամադրում այն ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ, որոնք Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից արտահանվում են՝

ՉԺՀ,

երրորդ երկրներ (տարածաշրջաններ)՝ ՉԺՀ մաքսային տարածքով տարանցմամբ:

6. ՉԺՀ-ն Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին տեղեկատվություն է տրամադրում այն ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ, որոնք ՉԺՀ-ից արտահանվում են՝

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ,

երրորդ երկրներ (տարածաշրջաններ)՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով տարանցմամբ:

7. Տեխնիկական պատրաստվածության մակարդակին հասնելուց հետո Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները և ՉԺՀ-ն

փոխանակելու են տեղեկատվություն այն ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ, որոնք երրորդ երկրներից (տարածաշրջաններից) տարանցիկ կարգով տեղափոխվում են՝

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ ՉԺՀ մաքսային տարածքով,

ՉԺՀ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով,

երրորդ երկրներ (տարածաշրջաններ)՝ Եվրասիական տնտեսական միության և ՉԺՀ մաքսային տարածքներով:

8. Սույն Համաձայնագրի իրականացման շրջանակներում չի իրականացվում ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման ապրանքներ տեղափոխվող, ինչպես նաև միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում:

9. Սույն Համաձայնագրի իրականացման շրջանակներում չի իրականացվում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությանը և ՉԺՀ օրենսդրությանը համապատասխան՝ պետական գաղտնիք (պետական գաղտնիքներ) հանդիսացող տեղեկությունների շարքին դասվող տեղեկատվության փոխանակում:

#### Հոդված 4

##### Փոխգործակցության մեխանիզմը

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվության փոխանակման համար պատասխանատու լիազորված մարմինները կենտրոնական մաքսային մարմիններն են:

2. ՉԺՀ կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվության փոխանակման համար պատասխանատու լիազորված մարմինը ՉԺՀ Գլխավոր մաքսային վարչությունն է:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովն ապահովում է սույն Համաձայնագրի դրույթների իրականացման համակարգումը և Եվրասիական

տնտեսական միության ինտեգրացված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ տեղեկատվության փոխանակման կազմակերպումը՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի դրույթները:

4. Եթե Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինները հանդես են գալիս որպես ուղարկող երկրի կամ տարանցման երկրի մաքսային մարմիններ, ապա համապատասխան լիազորված մարմիններն ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցում են Եվրասիական տնտեսական միության ինտեգրացված տեղեկատվական համակարգ՝ ՉԺՀ լիազորված մարմին այդ տեղեկատվությունը փոխանցելու համար:

5. Եթե ՉԺՀ մաքսային մարմինները հանդես են գալիս որպես ուղարկող երկրի կամ տարանցման երկրի մաքսային մարմիններ, ապա ՉԺՀ լիազորված մարմինը ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցում է Եվրասիական տնտեսական միության ինտեգրացված տեղեկատվական համակարգ՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմիններին այդ տեղեկատվությունը փոխանցելու համար:

## Հոդված 5

### Տեղեկատվության փոխանակումը

1. Սույն Համաձայնագրի իրականացման շրջանակներում փոխանակման ենթակա՝ ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ձևավորվում է մաքսային փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հիման վրա:

Այդպիսի տեղեկատվության փոխանակումն իրականացվում է էլեկտրոնային տեսքով՝ կանոնավոր կերպով:

2. Տեղեկատվության փոխանակումն իրականացվում է ռուսերենով կամ չինարենով:

Առանձին վավերապայմանների մասով տեղեկությունները կարող են ներկայացվել լատիներեն այբուբենի կիրառմամբ:

Ծածկագրված տեսքով տրամադրվող տեղեկատվության փոխանցման դեպքում օգտագործվում են միջազգային ստանդարտների հիման վրա մշակված դասակարգիչներ և տեղեկագրքեր:

3. Սույն Համաձայնագրի իրականացման շրջանակներում տեղեկատվության փոխանակումն ապահովելու նպատակով Կողմերը կարդիականացնեն իրենց տեղեկատվական համակարգերը և նախօրոք կիրականացնեն տեղեկատվության փոխանակմանը պատրաստվելու համար անհրաժեշտ բոլոր տեխնիկական աշխատանքները:

## Հոդված 6

### Տեղեկատվության օգտագործումն ու պաշտպանությունը

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը կոնֆիդենցիալ է: Կողմերը սահմանափակում են այդպիսի տեղեկատվության հասանելիությունը երրորդ անձանց համար, ինչպես նաև ձեռնարկում են միջոցներ՝ դրա անկառավարելի տարածումը թույլ չտալու համար:

2. Սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունն օգտագործվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և ՉԺՀ՝ սույն Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվության փոխանակման համար պատասխանատու լիազորված մարմինների կողմից՝ բացառապես մաքսային նպատակներով, և չի կարող որպես ապացույց օգտագործվել վարչական և քրեական վարույթների, ինչպես նաև դատաքննությունների ընթացքում՝ առանց այդ տեղեկատվությունը տրամադրած լիազորված մարմնի գրավոր համաձայնության:

3. ՉԺՀ լիազորված մարմնից տեղեկատվություն ստացած՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինները ձեռնարկում են միջոցներ՝ ուղղված ստացված տեղեկատվության կոնֆիդենցիալության ապահովմանը, և դրա համար օգտագործում են չթույլատրված մուտքից պաշտպանելու այնպիսի եղանակներ, որոնք նույնանման



են, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, նույնանման տեղեկատվության մասով կիրառվող միջոցներին ու եղանակներին:

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմիններից տեղեկատվություն ստացած ՉԺՀ լիազորված մարմինը ձեռնարկում է միջոցներ՝ ուղղված ստացված տեղեկատվության կոնֆիդենցիալության ապահովմանը, և դրա համար օգտագործում է չթույլատրված մուտքից պաշտպանելու այնպիսի եղանակներ, որոնք նույնանման են, ՉԺՀ օրենսդրությանը համապատասխան, նույնանման տեղեկատվության մասով կիրառվող միջոցներին ու եղանակներին:

4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովը և ՉԺՀ լիազորված մարմինն ապահովում են Եվրասիական տնտեսական միության ինտեգրացված տեղեկատվական համակարգի և ՉԺՀ լիազորված մարմնի համապատասխան տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվության պաշտպանությունը՝ այն փոխանցելիս:

#### Հոդված 7

##### Համաձայնագրի իրականացման հարցերով փոխգործակցությունը

1. Տարեկան մեկ անգամ Կողմերն անցկացնում են սույն Համաձայնագրի իրականացման հարցերի քննարկման աշխատանքային հանդիպում:

Անհրաժեշտության դեպքում խորհրդակցությունների միջոցով Կողմերը կարող են համաձայնեցնել լրացուցիչ աշխատանքային հանդիպումների անցկացումը:

2. Սույն Համաձայնագրի իրականացման հարցերի վերաբերյալ նամակագրությունն իրականացվում է ռուսերենով կամ չինարենով:

#### Հոդված 8

##### Տարաձայնությունների կարգավորումը

Սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում ծագած ցանկացած տարաձայնություն կարգավորվում է խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

#### Հոդված 9

##### Համաձայնագրում փոփոխությունների կատարումը

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

#### Հոդված 10

##### Համաձայնագրին միանալը և դրանից դուրս գալը

1. Եվրասիական տնտեսական միության յուրաքանչյուր նոր անդամ պետություն միանում է սույն Համաձայնագրին Կողմերի պայմանավորվածությամբ, որը ձեռք է բերվել սույն Համաձայնագրի Կողմերի ու Եվրասիական տնտեսական միության այդ նոր անդամ պետության միջև սույն Համաձայնագրին նրա միանալու վերաբերյալ բանակցությունների միջոցով: Այդպիսի միանալն իրականացվում է սույն Համաձայնագրի լրացուցիչ արձանագրություն կնքելու միջոցով:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովն անհապաղ գրավոր ծանուցում է ՉԺՀ-ին ցանկացած պետության՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության թեկնածուի կարգավիճակ ստանալու և Եվրասիական տնտեսական միությանը պետության միանալու մասին:

2. Եվրասիական տնտեսական միությունն անհապաղ գրավոր ծանուցում է ՉԺՀ-ին Եվրասիական տնտեսական միությունից պետության դուրս գալու մասին:

#### Հոդված 11

##### Համաձայնագրի ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար

անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և ՉԺՀ կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից 60 օրը լրանալուց հետո: Այդ ծանուցումների փոխանակումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և ՉԺՀ միջև:

## Հոդված 12

### Համաձայնագրի գործողության դադարեցումը

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնելու սույն Համաձայնագրի գործողությունը մյուս Կողմին համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: Համաձայնագրի գործողությունը դադարում է այդպիսի ծանուցումը մյուս Կողմի ստանալու օրվանից 6 ամիսը լրանալուց հետո:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում 2019 թվականի հունիսի 6-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ ռուսերեն և չինարեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

**Հայաստանի Հանրապետության կողմից՝**

**Չինաստանի Ժողովրդական  
Հանրապետության կողմից՝**

**Բելառուսի Հանրապետության կողմից՝**

**Ղազախստանի Հանրապետության կողմից՝**

**Ղրղզստանի Հանրապետության կողմից՝**

**Ռուսաստանի Դաշնության կողմից՝**

**Եվրասիական տնտեսական միության  
կողմից՝**

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«Եվրասիական տնտեսական միության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրի

**«Եվրասիական տնտեսական միության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրի իրականացման սկզբնական փուլում փոխանակման ենթակա տեղեկատվության կազմը**

Անվանումը	Նկարագրությունը
1. Տեղեկատվություն ապրանքային խմբաքանակի վերաբերյալ	
1. Ապրանքային խմբաքանակի եզակի համարը	Ապրանքների հայտարարագրի համարը
2. Ապրանքների անվանումների ընդհանուր քանակը	Ապրանքային խմբաքանակում ապրանքների անվանումների քանակը (թվային արժեքը)
2. Տեղեկատվություն ապրանքները տեղափոխող կամ որպես այդ ապրանքների տեղափոխման նախաձեռնող հանդես եկող անձանց վերաբերյալ	
1. Ապրանքներն ուղարկողը	Ուղարկողի երկրի (տարածաշրջանի) ծածկագիրը  Ուղարկողի ծածկագիրը՝ տրված Կողմի օրենսդրության համապատասխան (նշվում է ապրանքներն արտահանելիս)  Տեղեկություններ այն անձի վերաբերյալ, որը մաքսային փաստաթղթերում նշված է որպես ապրանքներն ուղարկող
2. Ապրանքներն ստացողը	Ստացողի երկրի (տարածաշրջանի) ծածկագիրը  Ստացողի ծածկագիրը՝ տրված Կողմի

Անվանումը	Նկարագրությունը
	<p>օրենսդրության համապատասխան (նշվում է ապրանքները ներմուծելիս)</p> <p>Տեղեկություններ այն անձի վերաբերյալ, որը մաքսային փաստաթղթերում նշված է որպես ապրանքներն ստացող</p>
<p>3. Ապրանքները փոխադրողը (լրացման համար պարտադիր չէ)</p>	<p>Տեղեկություններ այն անձի վերաբերյալ, որը մաքսային փաստաթղթերում նշված է որպես ապրանքները փոխադրող</p>
<p>3. Տեղեկատվություն միջազգային փոխադրում իրականացնող այն տրանսպորտային միջոցի (տրանսպորտային միջոցների) վերաբերյալ, որոնցում ապրանքները գտնվել են մաքսային տարածքից մեկնելիս</p>	
<p>1. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի համարը</p>	<p>Ապրանքներն ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրելիս՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների գրանցման համարները</p> <p>Ապրանքները երկաթուղային տրանսպորտով փոխադրելիս՝ երկաթուղային վագոնների (բաց վագոնների, գլանատակառոնների և այլն) համարները</p> <p>Ապրանքները ծովային (գետային) տրանսպորտով փոխադրելիս՝ նավերի անվանումները</p> <p>Ապրանքներն օդային տրանսպորտով փոխադրելիս՝ չվերթերի համարները</p>
<p>2. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի գրանցման երկրի ծածկագիրը</p>	<p>Այն երկրի (տարածաշրջանի) ծածկագիրը, որտեղ գրանցված է միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը. եթե փոխադրումն իրականացնելիս օգտագործվում է միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների շարժակազմ՝ ապա այն երկրինը (տարածաշրջանինը), որտեղ գրանցվել է միջազգային փոխադրում իրականացնող այլ տրանսպորտային միջոց (այլ տրանսպորտային միջոցներ) շարժման մեջ դնող՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը</p>

Անվանումը	Նկարագրությունը
3. Բեռնարկղերի համարները	Բեռնարկղերի նույնականացման համարները
4. Կցորդների համարները (լրացման համար պարտադիր չէ)	Կցորդների, կիսակցորդների և այլնի համարները (ավտոմոբիլային տրանսպորտի համար)
5. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի տեսակի ծածկագիրը	10՝ ծովային (գետային) տրանսպորտ, 20՝ երկաթուղային տրանսպորտ, 30՝ ավտոճանապարհային տրանսպորտ՝ բացառությամբ 31-րդ, 32-րդ ծածկագրերով նշված՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների, 31՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների շարժակազմ (քարշակ՝ կիսակցորդով կամ կցորդով), 32՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների շարժակազմ (քարշակ՝ կցորդով (կցորդներով) և կիսակցորդով (կիսակցորդներով)), 40՝ օդային տրանսպորտ
6. Ելքի ամսաթիվը	Ապրանքների ելքի ամսաթիվը
7. Մաքսային կապարակնիքի համարը (լրացման համար պարտադիր չէ)	Մաքսային կապարակնիքի նույնականացման համարը
<b>4. Տեղեկատվություն ապրանքների վերաբերյալ</b>	
1. Ապրանքի ծածկագիրը	Դասակարգման ծածկագիրը՝ ըստ Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգի (6 նիշից ոչ պակաս)
2. Ապրանքների նկարագրությունը	Ապրանքների անվանումը (առևտրային, կոմերցիոն կամ այլ ավանդական անվանում) և տեղեկություններ ապրանքային նշանների, մակնիշների, մոդելների, արտիկուլների, սորտերի, ստանդարտների և այլ տեխնիկական ու առևտրային բնութագրերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկություններ

Անվանումը	Նկարագրությունը
	հայտարարագրվող ապրանքի քանակական և որակական կազմի վերաբերյալ (առկայության դեպքում)
3. Ապրանքի գինը	Ապրանքի գինը, որը նշված է հայտարարագրի մեջ
4. Պայմանագրի գնի արժույթի ծածկագիրը	ISO 4217 դասակարգչին համապատասխան
5. Բեռնատեղիների ընդհանուր քանակը	Նշվում է հայտարարագրվող ապրանքների բեռնատեղիների քանակը՝ մաքսային փաստաթղթերին համապատասխան
6. Ապրանքի համաքաշը (կգ)	Ապրանքի ընդհանուր զանգվածը
7. Ապրանքի զտաքաշը (կգ)	Հայտարարագրվող ապրանքի զանգվածը՝ առանց որևէ փաթեթվածքի
8. Փաթեթվածքների նկարագրությունը	Քանակն ու տեսակը
9. Ապրանքների ծագման երկրի ծածկագիրը	Ապրանքների ծագման երկրի (տարածաշրջանի) ծածկագիրը
5. Տեղեկություններ ապրանքաուղեկից, տրանսպորտային և այլ փաստաթղթերի վերաբերյալ	
1. Մատակարարման պայմանի ծածկագիրը, աշխարհագրական կետի անվանումը	Մատակարարման պայմանների դասակարգչին համապատասխան՝ մատակարարման պայմանների վերաբերյալ տեղեկությունները (Incoterms 2000 և Incoterms 2010) և աշխարհագրական կետի անվանումը, որոնք նշված են արտաքին առևտրային պայմանագրում
2. Արտաքին առևտրային պայմանագրի համարը	Արտաքին առևտրային պայմանագրի համարը, որը նշված է հայտարարագրի մեջ
3. Տեղեկություններ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի վերաբերյալ	Տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի համարները և ամսաթվերը

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

«Եվրասիական տնտեսական միության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրի

**Այն տեղեկատվության կազմը, որի փոխանակմանը կողմերը ձգտելու են «Եվրասիական տնտեսական միության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրի փուլ առ փուլ իրականացմանը զուգընթաց և տեխնիկական պատրաստվածության մակարդակին հասնելուց հետո (կախված ուղղությունից)**

Անվանումը	Նկարագրությունը
<b>1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից ՉԺՀ արտահանվելիս և ՉԺՀ կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ արտահանվելիս ներկայացվող՝ ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության կազմը</b>	
1. Տեղեկատվություն ապրանքային խմբաքանակի վերաբերյալ	
1. Ապրանքային խմբաքանակի եզակի համարը	ապրանքների հայտարարագրի համարը
2. Ապրանքների անվանումների ընդհանուր քանակը	ապրանքային խմբաքանակում ապրանքների անվանումների քանակը (թվային արժեքը)
3. Ապրանքներն ուղարկող երկրի ծածկագիրը	ապրանքներն ուղարկող երկրի (տարածաշրջանի) ծածկագիրը
4. Ապրանքների նշանակման երկրի	ապրանքների նշանակման երկրի (տարածաշրջանի) ծածկագիրը



Անվանումը	Նկարագրությունը
ծածկագիրը	
2. Տեղեկատվություն ապրանքները տեղափոխող կամ որպես այդ ապրանքների տեղափոխման նախաձեռնող հանդես եկող անձանց վերաբերյալ	
1. Ապրանքներն ուղարկողը	<p>Ուղարկողի ծածկագիրը՝ տրված Կողմի օրենսդրության համապատասխան (նշվում է ապրանքներն արտահանելիս)</p> <p>Տեղեկություններ այն անձի վերաբերյալ, որը մաքսային փաստաթղթերում նշված է որպես ապրանքներն ուղարկող</p>
2. Ապրանքներն ուղարկողի հասցեն	<p>Ուղարկողի երկրի (տարածաշրջանի) ծածկագիրը</p> <p>Ուղարկողի գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, շենքի (մասնաշենքի, շինության), բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը)</p>
3. Ապրանքներն ստացողը	<p>Ստացողի ծածկագիրը՝ տրված Կողմի օրենսդրության համապատասխան (նշվում է ապրանքները ներմուծելիս)</p> <p>Տեղեկություններ այն անձի վերաբերյալ, որը մաքսային փաստաթղթերում նշված է որպես ապրանքներն ստացող</p>
4. Ապրանքներն ստացողի հասցեն	<p>Ստացողի երկրի (տարածաշրջանի) ծածկագիրը</p> <p>Ստացողի գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, շենքի (մասնաշենքի, շինության), բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը)</p>
5. Ապրանքները փոխադրողը	<p>Փոխադրողի ծածկագիրը՝ տրված Կողմի օրենսդրության համապատասխան</p> <p>Տեղեկություններ այն անձի վերաբերյալ, որը մաքսային փաստաթղթերում նշված է որպես ապրանքները փոխադրող</p>
6. Ապրանքները փոխադրողի հասցեն (լրացման համար պարտադիր չէ)	<p>Փոխադրողի երկրի (տարածաշրջանի) ծածկագիրը</p> <p>Ապրանքները փոխադրողի գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, շենքի (մասնաշենքի,</p>

Անվանումը	Նկարագրությունը
	շինության), բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը)
7. Տեղեկատվական տեղեկություններ	ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն
<p>3. Տեղեկատվություն միջազգային փոխադրում իրականացնող այն տրանսպորտային միջոցի (տրանսպորտային միջոցների) վերաբերյալ, որոնցում ապրանքները գտնվել են մաքսային տարածքից մեկնելիս</p>	
1. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի համարը	<p>ապրանքներն ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրելիս՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների գրանցման համարները,</p> <p>ապրանքները երկաթուղային տրանսպորտով փոխադրելիս՝ երկաթուղային վագոնների (բաց վագոնների, գլանատակառների և այլն) համարները,</p> <p>ապրանքները ծովային (գետային) տրանսպորտով փոխադրելիս՝ նավերի անվանումները,</p> <p>ապրանքներն օդային տրանսպորտով փոխադրելիս՝ չվերթերի համարները</p>
2. Բեռնարկղերի համարները	բեռնարկղերի նույնականացման համարները
3. Կցորդների համարները (լրացման համար պարտադիր չէ)	կցորդների, կիսակցորդների և այլնի համարները (ավտոմոբիլային տրանսպորտի համար)
4. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի տեսակի ծածկագիրը	<p>10՝ ծովային (գետային) տրանսպորտ,</p> <p>20՝ երկաթուղային տրանսպորտ,</p> <p>30՝ ավտոճանապարհային տրանսպորտ՝ բացառությամբ 31-րդ, 32-րդ ծածկագրերով նշված՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների,</p> <p>31՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների շարժակազմ (քարշակ՝ կիսակցորդով կամ կցորդով),</p> <p>32՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների շարժակազմ (քարշակ՝ կցորդով (կցորդներով) և կիսակցորդով (կիսակցորդներով)),</p>

Անվանումը	Նկարագրությունը
	40՝ օդային տրանսպորտ
5. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի գրանցման երկրի ծածկագիրը	այն երկրի (տարածաշրջանի) ծածկագիրը, որտեղ գրանցված է միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը. եթե փոխադրումն իրականացնելիս օգտագործվում է միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների շարժակազմ՝ ապա այն երկրինը (տարածաշրջանինը), որտեղ գրանցվել է միջազգային փոխադրում իրականացնող այլ տրանսպորտային միջոց (այլ տրանսպորտային միջոցներ) շարժման մեջ դնող՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը
6. Ելքի ամսաթիվը	ապրանքների մեկնման ամսաթիվը
7. Մաքսային կապարակնիքի համարը (լրացման համար պարտադիր չէ)	մաքսային կապարակնիքի նույնականացման համարը
8. Տեղեկատվական տեղեկություններ	ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն
<b>4. Տեղեկատվություն ապրանքների վերաբերյալ</b>	
1. Ապրանքի հերթական համարը	թվային արժեքը
2. Ապրանքի ծածկագիրը	ապրանքի դասակարգման ծածկագիրը՝ ըստ Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգի (6 նիշից ոչ պակաս)
3. Ապրանքների նկարագրությունը	ապրանքների անվանումը (առևտրային, կոմերցիոն կամ այլ ավանդական անվանում) և տեղեկություններ ապրանքային նշանների, մակնիշների, մոդելների, արտիկուլների, սորտերի, ստանդարտների և այլ տեխնիկական ու առևտրային բնութագրերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկություններ հայտարարագրվող ապրանքի քանակական և որակական կազմի վերաբերյալ (առկայության դեպքում)
4. Տեղեկություններ ապրանքներն	տեղեկություններ արտադրողի վերաբերյալ (նրա վերաբերյալ տեղեկությունների առկայության

Անվանումը	Նկարագրությունը
արտադրողի վերաբերյալ	դեպքում)
5. Ապրանքների ծագման երկրի ծածկագիրը	ապրանքների ծագման երկրի (տարածաշրջանի) ծածկագիրը
